ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

GEORGE GASCÓN
ՇՐՋԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

da.lacounty.gov @LADAOffice @LACountyDA

Զեկույց

Սեռական բռնության մասին զեկուցելու մի շարք պատճառներ կան՝

- Շատ դեպքերում, հանցանք գործողները նույն անձինք են: Հետևաբար, հանցանքի մասին զեկուցելու դեպքում, դա կարող է օգնել բացահայտել և բռնել հանցագործին, նախքան վերջինս նոր հանցանք կգործի:
- Հանցանքի մասին զեկուցելով՝ հնարավարություն կտրվի տուժվածին թեթևացնելու իր վիճակը կամ վերջ դնել «տուժված կոչված» կարգավիճակին:
- Համապատասխան գործողությունների իրականացմամբ՝ միտված հանցագործին պատասխանատվության ենթարկելուն, տուժվածը կարող է իրեն զորեղ զգալ:
- Հարձակվողը ենթակա է քրեական հետապնդման:
- Տուժվածը, որը զեկույցում է հանցագործության մասին ու համագործակցում է իրավապահ մարմինների հետ, իրավասու է անվճար խորհրդատվության ու փոխհատուցման Կալիֆորնիայի Տուժվածների Փոխհատուցման Խորհրդի կողմից:

Ոստիկանության Զեկույցը և Բժշկական Քննությունը

Երբ կանչում են իրավապահ մարմիններին, սպան զեկույց է վերցնում հանցագործության մասին և, անհրաժեշտության դեպքում, կազմակերպում անվճար բժշկական քննություն: Տուժվածը կարող է խնդրել, որ ընկերը կամ աջակցող անձը և տուժվածների համար ծառայությունների ներկայացուցիչը ներկա գտնվեն զեկույցի ընդունման ժամանակ: Ի լրումն, եթե տուժվածը իգական սեռի ներկայացուցիչ է, ապա վերջինս կարող է խնդրել, որ իր գործին կցվի կին ոստիկան:

Ավելի լավ է, որքան հնարավոր է շուտ զեկուցել սեռական բռնության մասին, որովհետև այս դեպքում, հնարավոր կլինի պահպանել արժեքավոր կամ կարևոր ապացույցները: Հանցանքից տուժածը չպետք է իրեն հետ պահի հանցանքի մասին զեկուցելուց միայն նրա համար, որ արդեն ուշ է դրա մասին զեկուցել:

Մեկ տուժվածի զեկույցը կարող է օգնել հաստատել մեկ այլ տուժվածի զեկույցը նույն կասկածյալի վերաբերյալ:

Դատավարություն

Զեկույցի հետաքննությունից և կասկածյալին հայտնաբերելուց հետո օրինապահները գործը կներկայացնեն Շրջանային Գլխավոր Դատախազություն՝ վերանայման համար: Բավարար ապացույցների առկայության դեպքում Շրջանային Գլխավոր Դատախազությունը քրեական գործ կհարուցի:

Սեռական բռնության գործերը դատվում են մասնագիտացված շրջանային դատախազների կողմից, որոնք հարցազրույց են ունենում տուժվածի հետ, բացատրում դատական գործընթացը և մնում գործին կցված հարուցման պահից մինչև գործի ավարտը: Նման պրակտիկան թույլ է տալիս, որպեսզի տուժվածը անընմեջ կապի մեջ լինի դատական լսումների ողջ ընթացքում, և զերծ է պահում վերջինիս կրկին պատմել/խոսել հանցանքի մասին այլ դատախազների մոտ:

Վկայություն Տալը

Գործի հարուցումից հետո այն կնշանակվի նախնական քննության: Շատ դեպքերում տուժվածը պետք է ցուցմունք տա դատարանում - երդվյալ ատենակալներ չեն լինի: Եթե դատավորը պարզի, որ կան բավարար ապացույցներ, գործը կանցնի միջդատական վարույթ և դատաքննության: Եթե տեղի ունենա դատավարություն, տուժվածը պետք է ցուցմունք տա, շատ դեպքերում, երդվյալ ատենակալների առջև: Եթե մինչ դատաքննությունը մեղադրյալը իրեն մեղավոր ճանաչի, տուժվածը ցուցմունք տալու կարիք չի ունենա: Նախքան ցանկացած ցուցմունք տալը, դատախազը դատական գործընթացի վերաբերյալ կխոսի տուժված կողմի հետ:

Սկանավորե՛ք այստեղ՝ այս բրոշյուրն առցանց դիտելու համար:

Ծառայություններ Տուժվածների Համար

Շրջանային Դատախազության Տուժվածների Համար Ծառայությունների Բյուրոն հասանելի է ողջ Լոս Անջելեսի դատարանների շենքերում և ոստիկանական բաժանմունքներում: Տուժվածների համար ծառայությունների ներկայացուցիչները տրամադրում են օգնություն և ռեսուրսներ՝ օգնելու ապահովել տուժվածների անվտանգությունը և հոգեբանական խորհրդատվության ուղեգրեր՝ սեռական բռնության հետևանքով առաջացած տրավմայի վերացման համար: Տուժվածներին՝ փոխհատուցում ստանալու հարցում օգնելուց զատ, ներկայացուցիչները տրամադրում են՝ քրեական արդարադատության համակարգի վերաբերյալ տեղեկատվություն դատական աջակցություն, պաշտպանական հրամանի տրամադրման հարցում օգնություն, շտապ ապաստան, սնունդ, հագուստ և աջակցում փոխհատուցման համար դիմում-հայտ ներկայացնել Կալիֆորնիայի Տուժվածների Փոխհատուցման Խորհրդին:

Օգնել Հանցագործության Տուժվածներին Վերապրել

Լոս Անջելեսի Շրջանային Դատախազության Տուժվածների Համար Ծառայությունների Բյուրո
da.lacounty.gov/victims

(800) 380-3811

Տուժվածների Իրավունքները

- Սեռական բռնությունից տուժվածը, որի առիթով քրեական գործ է հարուցվել կասկածյալի դեմ, իրավունք ունի պահանջելու, որ վերջինս ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի անալիզ հանձնի, և տեղեկանա արդյունքների մասին նախքան դատական գործի ավարտը: Դատարանը՝ տուժվածի խնդրանքով կամ տուժվածի անունից դատախազի խնդրանքով, անալիզ տալու հրաման կտա, եթե պարզվի, որ սեռական բռնության ժամանակ մարմնական հեղուկներ են փոխանցվել տուժվածին:
- Տուժվածն իրավունք ունի պահանջելու, որ իր անունն ու հասցեն գաղտնի պահվեն հանրությունից՝ ինչպես դատական արձանագրություններում, այնպես էլ ցուցմունքների ժամանակ:
- Դատարանում, որպես կանոն, տուժած կողմին չի կարելի հարցաքննել իր անցյալ սեռական պատմության/կյանքի մասին: (Կան շատ սահմանափակ բացառություններ):
- Տուժվածն իրավունք ունի ներկա գտնվելու ամբաստանյալի դատավճռի կայացմանը և տուժվածի ազդեցության մասին հայտարարություն անել պատիժը նշանակող դատավորին:
- Տուժվածն իրավունք ունի ծանուցվելու պայմանական վաղաժամկետ ազատման բոլոր լսումների մասին և տրամադրել տեղեկություններ՝ նախքան որոշում կկայացվի դատապարտյալի ազատման վերաբերյալ:
- Տուժվածը իրավունք ունի ծանուցվելու հանցագործի ազատման, բանտից փախուստի կամ մահվան մասին: Ծանուցում ստանալու համար, տուժվածը պետք է լրացնի Կալիֆորնիայի Ուղղիչ և Վերականգնողական Դեպարտամենտի Տուժվածների Ծառայությունների համար դիմումի 1707 ձևը և միշտ տեղեկացնի CDCR-ի Տուժվածների և Վերապրողների Իրավունքների և Ծառայությունների Գրասենյակին իր ներկա հասցեի մասին: Ձևաթուղթը և լրացման հրահանգները ստանալու համար զանգահարեք **(877) 256-6877** կամ այցելեք **cdcr.ca.gov/victim_services/**:

Սեռական Բռնության Թեժ Գծեր

***Հասանելի է նաև իսպաներեն**

Խաղաղօվկիանոսյան Ասիական Ընտանիքի Կենտրոն..... (800) 339-3940
(հասանելի է՝ Չինարեն, Կորեերեն, Տագալերեն, Թայերեն և Վիետնամերեն)

Արևելյան Լոս Անջելեսի Կանանց Կենտրոնի Ճգնաժամային Թեժ Գիծ*..... (800) 585-6231

Խաղաղություն Ընդդեմ Բռնության*
Լոս Անջելես ..... (213) 626-3393
Արևմտյան Լոս Անջելեսի Տարածք..... (310) 392-8381
Սան Գաբրիել Վալլի.....(626) 793-3385

Քույր Նախագծի Ընտանեկան Ծառայություններ*
Պոմոնա Վելլի, Սան Գաբրիել Վալլի.....(909) 626-4357

Բռնաբարությունից Հետո Բուժման Կենտրոն, Սանտա Մոնիկա-UCLA Բժշկական Կենտրոն* ..... (424) 259-7208

Միավորված Ուժ *
Սան Ֆերնանդո Վալլի ..... (818) 886-0453
Սանտա Կլարիտա Վալլի..... (661) 253-0258

Վալլի Օազիս*
Անտելոպ Վալլի .....(661) 723-7273

YWCA Մեծ Լոս Անջելեսի Սեռական Բռնաբարությունների Ճգնաժամային Ծառայություններ*
Քոմփթոն, Սաութ Բեյ, Հարավային Լոս Անջելես ... (877) Y-HELPS-U (877) 943-5778